*Երանելի է այն մարդը,*
*ով ամբարիշտների խորհրդով*
*չի շարժվում, մեղավորների*
*ճանապարհին ոտք չի դնում և*
*չարագործների հետ համախոհ*
*չի լինում, այլ հաճույք է ստանում*
*Տիրոջ օրենքներից և*
*գիշեր–ցերեկ խորհում է նրա*
*պատվիրանների մասին:*

*Սաղմոս 1. 1–2*

ISSN 1829-2925

# ՇՈՂԻԿ

2016 4
SHOGHIK

## ԱՊՏԱՐ ԼԻՆԵՆՔ

## ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀՈՂԻՆ

1915-2015
Հիշում ենք եւ պահանջում

ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՍ
AMAA CHILDREN AND YOUTH MAGAZINE

Գրիգոր Խանջյան, «Հայոց այբուբեն» (1981 թ)

**Հիմնադիր՝**
**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**

**Խմբագրական խորհուրդ՝**
Վեր. Ալբերտ Փայտյան
Էմիլյա Օհանյան
Լյուսյա Առաքելյան

**Editorial committee:**
Rev. Albert Paytyan
Emilya Ohanyan
Lyusya Arakelyan

**Համակարգչային աշխ.՝**
Արևիկ Հակոբյան

**Computer layout:**
Arevik Hakobyan

**Նկարիչ, գեղ. խմբագիր՝**
Էմիլյա Օհանյան

**Artist:**
Emilya Ohanyan

©ՀԱԵ

## ՄԵՐ ՏԱՌԵՐԸ

*Տեսիլքից են ծավել*
*տառերը մեր,*
*Հողմերով են սնվել*
*տառերը մեր,*
*Ջրդեղվել են,*
*դարձել երկաթագիր,*
*Քարերին են գրվել*
*տառերը մեր...*
*Երբ փորձել են*
*ջնջել ու եղծանել,*
*Կայծակին են տվել*
*տառերը մեր:*

*Վահագն Դավթյան*

Գրանցման վկայական՝
01Մ 000035
Հրատարակության **ԺԵ** տարի
ՀԱՀ
ՀՀ, 0019, Երևան,
Բաղրամյան 18
AMAA
Baghramyan 18, 0019
Yerevan, Armenia
Հեռ./Tel. (+37410) 54 35 52
54 35 76
E-mail: eca@arminco.com
Ֆաքս/Fax (+37410) 54 75 69

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

Տպաքանակը՝ 3200
Տարածվում է անվճար

*«Շողիկ»-ից մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է*



Ալբերտ Տեր-Անանյան, 13 տ.



Արթուր Խաչատրյան, 10 տ.



Նորայր Խլոյան, 11 տ.



Լուսինե Մարգարյան, 10 տ.

Գոռ Սեդրակյան, 11 տ.

Լուսինե Մարգարյան, 10 տ.

Մերի Խեչոյան, 15 տ.

## Երևանի «Շող» կենտրոն

Շուշան Գրիգորյան, 12 տ.

Արուսյակ Սարգսյան, 10 տ.

Լիլիթ Մարգարյան, 12 տ.

Մերի Խեչոյան, 15 տ.

Դանիել Արուշանյան, 10 տ.

*Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք,*
*ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում, հիշում...*
**Ավետիք Իսահակյան**

Ամեն տարի հայ ժողովուրդը նշում է իր լեզվի ու մշակույթի տոնը, որը կոչվում է «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց» և խորհրդանշում է հայոց գրերի գյուտը, Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը, թարգմանչաց շարժումն ու հայ դպրության սկիզբը: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին այն տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է տոն «Սրբոց Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրովբայ» և տոնվում է Հոգեգալստյան տոնի չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը, իսկ երկրորդը՝ «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպ Մաշտոցի, նրա ավագ ու կրտսեր աշակերտների՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու: Սրբոց Թարգմանչաց տոնը նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

1999 թվականի նոյեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն որոշում ընդունեց ստեղծելու մայրենի լեզվի միջազգային օր, իսկ 2000 թվականի փետրվարի 21-ից աշխարհի բոլոր ազգերը սկսեցին տոնել իրենց մայրենի լեզվի միջազգային օրը: Այս ամենից ոգևորված՝ 2008 թվականը հայտարարվեց մայրենի լեզվի տարի:

Վերոհիշյալ տոների առաջացման նպատակն էր գիտակցել, արժևորել և պահպանել յուրաքանչյուր ազգի լեզուն, քանզի այն ազգը պահպանելու կարևորագույն միջոցն է: Ցավոք, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսման՝ աշխարհի շուրջ 6000 լեզուների ուղիղ կեսը մոտակա ժամանակներս կարող է կորցնել իր վերջին կրողներին: Այս կանխատեսումը խիստ մտահոգիչ է և կարող է սպառնալ նաև մեզ, եթե մենք չջանանք մաքուր պահել ու պահպանել մեր լեզուն:

*«Մեր լեզուն ճանապարհ է*
*դեպի հավերժություն,*
*Գրավական՝ մեր ինքնության,*
*Նշյան տապան՝ մեր փրկության,*
*Լուսաստղ՝ մեր լինելության»:*

*Գարեգին Ա*
*Ամենայն Հայոց Կաթողիկոս*

*Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,*
*Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին*
*Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս՝*
*Վառված հրով անշեջ դարերում հին:*

*Ե. Չարենց*

# ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՆՈՒՄ Է
# ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ
# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ 350-ԱՄՅԱԿԸ

**Աստվածաշունչը** քրիստոնյաների սրբազան գիրքն է, որն Աստծու ներշնչմամբ գրել են մարգարեներն ու առաքյալները: Սուրբ Գրքի առանձին մասերը կամ գրքերը շուրջ 4 տասնյակ հեղինակներ գրել են 1500 տարվա ընթացքում: **Աստվածաշունչն** Աստծու ստեղծագործության պատմությունն է: Այնտեղ ամփոփված են անհիշելի ժամանակներից եկող կյանքի փիլիսոփայությունը, մարդկանց կուտակած վիթխարի կենսափորձը, տիեզերքի և աշխարհի արարման ու պատմական անցքերի վերաբերյալ մեր նախնիների պատկերացումները: **Աստվածաշունչը** կազմված է Հին և Նոր Կտակարաններից: Հին Կտակարանը պարունակում է 48 գիրք և գրվել է Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ: Այն գրված է հին եբրայերենով, մասամբ՝ արամեերենով, Նոր Կտակարանը՝ հիմնականում հին հունարենով: Հին Կտակարանը բաժանվում է 4 հիմնական մասի՝ «Օրենք», որը պարունակում է Հնգամատյանը (Մովսեսի հինգ գրքերը), «Պատմական գրքեր», «Մարգարեներ» և «Իմաստասիրական մատյաններ»:

Փրկչագործությունն **Աստվածաշնչի** առանցքային թեման է, որով կապակցվում են Հին և Նոր Կտակարանները: Հին Կտակարանի գրեթե բոլոր գրքերում՝ մարգարեություններում, սաղմոսներում, խոսվում է Փրկչի գալստյան մասին:

Նոր Կտակարանը գրվել է Քրիստոսի ծննդից հետո: Նոր Կտակարանում՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի Ավետարաններում, պատմվում է Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան, կյանքի, վարդապետության և զոհաբերության մասին: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունից հետո նրա աշակերտները՝ առաքյալները, տարածեցին Քրիստոսի փրկության ավետիսը՝ բարի լուրը: Նոր Կտակարանում են զետեղված նաև առաքյալների նամակները, որտեղ ամփոփված է Տիրոջ խոսքը՝ ուղղված քրիստոնյաներին, նաև Հայտնությունը, որտեղ պատմվում է աշխարհի վախճանի մասին:

**Աստվածաշունչը** մեծապես նպաստել է քրիստոնյա ժողովուրդների

մտավոր ու հոգևոր զարգացմանը: Աստվածաշնչյան թեմաներով ստեղծվել են գրական և գեղարվեստական բազմաթիվ երկեր: Այն դաստիարակում է, որ սիրենք Աստծուն ամբողջ սրտով ու ամբողջ էությամբ, սիրենք ընկերոջը և նրա համար անենք այն ամենը, ինչ ցանկանում ենք, որ մեզ համար անեն:

Աստվածաշունչը թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Հայերեն Աստվածաշունչը համարվում է աշխարհի ամենալավ թարգմանություններից մեկը: Այն հայերեն առաջինը թարգմանել են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ V դարում:

XVI դարի վերջից հայ հոգևորականները քայլեր են ձեռնարկում հրատարակելու Աստվածաշունչը, քանի որ ձեռագիր աստվածաշնչերի պատրաստումը և տարածումը բավականին թանկ հաճույք էր, իսկ տպագիր արտադրանքն ավելի էժան էր ու արագ կարելի էր տարածել:

Ուստի, Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հայերեն Աստվածաշնչի տպագրությունը կազմակերպելու համար 1666թ. մարտի 11-ին հայ մշակութային գործիչ, տպագրիչ, լեզվաբան արք. Ոսկան Երևանցուն իր աշակերտների հետ ուղարկում է Հոլանդիա: Այն ժամանակ Հոլանդիան համարվում էր Եվրոպական գրատպության կենտրոններից մեկը, նաև ելք ունենալով դեպի ծով՝ թույլ էր տալիս նավերով տպագիր գրքեր տեղափոխել ցանկացած երկիր: Ոսկանը դեռ երիտասարդ տարիներին Էջմիածնում մշակել էր տպագիր Աստվածաշնչի տարբերակը՝ փորձելով ապագա գրքին իսկական հայկական շունչ հաղորդել: Եվ ահա Ամստերդամում Աստվածաշունչը տպագրելու համար երկու տարի շարունակ ահռելի աշխատանք տանելուց հետո 1668 թ. հոկտեմբերի 13-ին լույս է տեսնում հայերեն առաջին Աստվածաշունչը: Երևանցին աշխատանքներում ներգրավել էր եվրոպացի փորագրողների, ովքեր յուրաքանչյուր գրքի վրա պատկերել էին հայկական զարդանախշեր և փորագրություններ արել՝ տպագրված գրքի յուրաքանչյուր օրինակ դարձնելով արվեստի յուրահատուկ ստեղծագործություն:

Հազարավոր օրինակների թվում կային նաև արծաթե ու կաշվե կազմով գրքեր:

Այսպիսով, Ոսկանյան Աստվածաշունչը բաղկացած է 1462 երկսյուն էջերից (2924 սյունակ) և 159 պատկերներից: Տպաքանակը՝ 5000 օրինակ: Ոսկանյան Աստվածաշնչի հիմքում օգտագործվել է 1295 թ. Կիլիկիայի Հեթում Բ թագավորի պատվերով ընդօրինակված Աստվածաշունչը: Այս բնագիրը Ոսկան Երևանցին խմբագրել է ըստ Աստվածաշնչի լատիներեն թարգմանության՝ Վուլգաթայի: Նա տպագրության ընթացքում թարգմանել և ավելացրել է նաև Հին Կտակարանի մի քանի գրքեր, որոնք բացակայում էին Աստվածաշնչի հայկական կանոնում: Այսօր էլ, 350 տարի անց, առաջին տպագիր Աստվածաշունչը զարմացնում է իր գեղագիտական լուծումներով ու բովանդակության գրագետ շարադրմամբ: Առաջին տպագիր Աստվածաշնչի հրատարակումով իրականացավ հայերի երազանքը՝ տեսնել հայերեն Աստվածաշնչի տպագիր տարբերակը:

# ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ



***«Գործք Առաքելոց» գրքի մասին խոսելու համար առաջին հերթին պետք է անդրադառնալ նրա անվանմանը: Այն արդեն հուշում է գրքի բովանդակության և պատմելիքի մասին: «Գործք Առաքելոց» նշանակում է «առաքյալների գործերը»: Այսինքն՝ գիրքն իր քսանութ գլուխներով փորձում է ընթերցողին ներկայացնել Հիսուս Քրիստոսի տասներկու առաքյալների գործունեությունը՝ Նրա խաչելությունից, հարությունից և համբարձումից հետո:***

«Գործք Առաքելոց»-ը գրվել է մոտավորապես Քրիստոսից հետո ութսունից իննսուն թվականների միջակայքում: Չնայած նրան, որ գիրքն ինքն իրենով առանձին տեղ է զբաղեցնում Աստվածաշնչում, բայց այն սերտորեն կապված է Ղուկասի ավետարանի հետ, ավելին՝ այն Ղուկասի ավետարանի երկրորդ հատորն է: Այս երկու գրքերի հեղինակը միևնույն անձն է՝ Ղուկասը: «Գործք Առաքելոց»-ը շարունակում է Ղուկասի ավետարանում նկարագրված իրականությունն ու ներկայացնում է պատմության հետագա ընթացքը: Ավետարանում հեղինակը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի Ավետարանը կամ Աստծու կողմից նախաձեռնած մարդկության փրկության ծրագիրը, որն էլ Բարի Լուրն է: Այս ամենը տեղի ունեցավ Հիսուսի կյանքի, քարոզչության, խաչելության, հարության ու համբարձման միջոցով: Եվ ահա պատմությունն այստեղ կանգ չի առնում, իսկ «Գործք Առաքելոցն» էլ շարունակում է պատմել այն: Գրքի սկզբում Հոգեգալստի միջոցով կատարվում է ավետարանի մեջ տրված առաքյալների և համայն մարդկության հետ լինելու Աստծու խոստումը: Եվ սրանով «Գործք Առաքելոց» գիրքը մեր առջև է բացում մարդկության պատմության մեջ մի նոր, աննախադեպ դարաշրջան: Կատարվում է Աստծու ևս մեկ խոստում՝ ավետարանի քարոզչությունը դուրս է գալիս Երուսաղեմի սահմաններից ու տարածվում Սամարիայում և դեպի Հռոմեական կայսրության այլ անկյուններ:

Սրանով գիրքը նաև ցույց է տալիս Հիսուս Քրիստոսի Ավետարանի տիեզերական նշանակություն ունենալու փաստը: Այն միայն հրաների համար նախատեսված փոքր, տեղային կամ տարածաշրջանային երևույթ չէր, այլ համամարդկային, համատիեզերական նշանակություն ունեցող իրականություն:

«Գործք Առաքելոց»-ում քրիստոնյաներիս համար մեկ այլ, նույնպես չափազանց կարևոր հարցի՝ Եկեղեցու հիմնման մասին է խոսվում: Ավետարանի մեջ Հիսոսը հաճախ էր խոսում Աստծու կամ Երկնքի թագավորության մասին՝ ասելով, որ այն մոտեցել է և արդեն երկրի վրա է: Հնարավոր է՝ շատերիս համար սա հասկանալի չէ, և ահա «Գործք Առաքելոց»-ը մեզ բացատրում է՝ Եկեղեցին որ հիմնվեց, Սուրբ Հոգու գալուստով ստեղծվեց Աստծու կողմից լինելու Իր թագավորության կրողը, ապրողը, տարածողը և քարոզողը: «Գործք Առաքելոց»-ը մեզ սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանի կայանալը, տարածվելը և վերջապես Եկեղեցու հիմնվելն Աստծու մտքի մեջ էր ի սկզբանե, և Աստվածաշնչում, մինչ «Գործք Առաքելոց»-ը, ամեն բան սրա նախապատրաստությունն էր:

«Գործք Առաքելաց»-ում, բացի առաքյալներից, բազմաթիվ գործող անձինք են հիշատակվում՝ Բառնաբաս, Շիղա, Հովհաննես Մարկոս, Ստեփանոս և այլն, բայց հիմնական կերպարները Պողոսն ու Պետրոսն են: Պետրոսն առաջնորդում և ծառայում է Ավետարանի տարածմանը և Եկեղեցու հիմնմանը Հրեաստանում, իսկ Պողոսը դառնում է հեթանոսների առաքյալ ուը ծառայում է Ավետարանի տարածմանն ու Եկեղեցու հիմնմանը Հռոմեական կայսրության տարբեր հեռավոր ծայրերում:

«Գործք Առաքելոց»-ում նկարագրված վայրերը, ուր Պողոսն իր գործակիցների հետ քարոզեց ու գործեց իր երեք ճամփորդությունների ժամանակ, բավական շատ են: Այս բոլոր վայրերն անշուշտ գտնվում էին Հռոմեկան կայսրության տարածքում: Դրանք ներառում էին բազմաթիվ կարևոր քաղաքներ Հունաստանում, Իտալիայում, Կիպրոսում և Փոքր Ասիայի արևմտյան ափերին:

Բայց սրանով գրքում հիշատակված քաղաքների ու վայրերի ցանկը չի ավարտվում. «Գործք Առաքելոց» գրքի ավարտը բաց է, քանի որ Ավետարանը պիտի հասնի ամբողջ աշխարհին:

*Պատրաստեց պատ. Արամ Բաբաջանյանը*

## ԱՍՏԾՈՒ ԴԵՄ ՄԵՂԱՆՉԵԼ

Աստծու պատգամներից յուրաքանչյուր շեղում Աստծու դեմ մեղք գործել է: Ամեն մարդ շատ լավ գիտակցում է՝ իր կատարած այս կամ այն քայլը մեղք է, թե ոչ: Անառակ որդին էլ հասկացավ, որ մեղանչել է երկնքի (Աստծու) դեմ և որոշեց տուն վերադառնալ: Առաջին խոսքերը, որ նա ասած հորը. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առջև, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու» (Ղուկաս 15. 21):

Հայրը գրկաբաց ընդունեց և ներեց որդուն: Աստված մեզ նույնպես ներում է, երբ մենք մեղանչում ենք իր առջև ու ներում խնդրում և այլևս չենք կրկնում նույն մեղքը:

ՊԱՏԱՍԽԱՆ ՆՇԵՐ



***Աստծու երկյուղն ունենալ*** նշանակում է Աստծուց վախենալ նրա մեծագույն փառքի, սրբության, հզորության համար: Աստծուն վերաբերվել ակնածանքով, պատկառանքով ու խորագույն հարգանքով: Բոլոր նրանք, ովքեր տեսնում են Աստծու փառքը, նրա երկյուղը չունենալ չեն կարող: Սաղմոսերգուն ասում է. «Թող երկյուղ կրի ՏԻՐՈՋԻՑ ողջ երկիրը, և Նրանից թող դողան բոլոր բնակիչներն աշխարհի, քանզի Նա ասաց և ստեղծվեցին, Նա հրամայեց և հաստատվեցին»:

***Սաղմ. 32. 8-9***

# ԴԱՇՏԱԴԵՄԻ ԱՄՐՈՑԸ

Աշխարհում շատ քիչ ժողովուրդներ կան, որոնք մեր փոքրիկ տարածքի և պատմության հետ համեմատած, բերդեր ու ամրոցներ են ունեցել, մինչդեռ մեր տարածքում դրանց թիվն այնքան է, որ մասնագետները դժվարանում են հաշվել դրանք: Դա խոսում է այն մասին, որ հայ ժողովուրդն այդ բերդերի ու ամրոցների հետ է կապել իր գոյատևումը: Այդ բերդերի մի մասն էլ կառուցել են օտարները՝ պարսիկ խաները և թուրք սուլթանն ու փաշաները, քանզի գիտակցել են, որ նվաճած տարածքներն իրենցը չեն, և փորձել են այդ բերդերի միջոցով պահպանել նվաճածը, մինչդեռ մենք ուրիշի տարածքում երբեք բերդ կամ ամրոց չենք կառուցել, իսկ այն բերդերն ու ամրոցները, որոնք կառուցել ենք մեր հողի վրա, եղել են բացառապես պաշտպանական և ինքնապաշտպանական մղումներով: Նշանավոր այդ բերդերից մեկը Դաշտադեմի ամրոցն է, որի ազատագրումը շատ գեղեցիկ կերպով նկարագրում է Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վիպասքում:

«1918 թ. մայիս ամիսն էր: Սասունցի ձիավոր հայդուկների մի խումբ Իգդիրի սարերով սրընթաց իջավ Արարատյան դաշտ՝ մոտենալով բարձր դարավանդի վրա կանգնած Թալինի հնադարյան բերդին: Այդ կրկնապարիսպ բերդի ներսում և նրա շրջակա ավաններում մեկ և կես դար առաջ հայ Կամսարական տոհմի շինականներին բռնությամբ տեղահանելով՝ ամրացել էին մի քանի թաթար և պարսիկ իշխանավորներ՝ կեղեքելով և սարսափի մեջ պահելով այդ շրջանի հայ աշխատավորներին: Հեծյալները խորտակեցին ամրոցի դռները և բերդի մեծ դռնով խուժեցին ներս»:

**Այսպիսով՝ Դաշտադեմի ամրոցը** գտնվում է Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում, Թալին քաղաքից շուրջ 4 կմ հարավ-արևմուտք: Դրա կառուցման ժամանակի և կառուցողների վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն պահպանվել: Ենթադրվում է, որ կառուցվել է V-VII դ., ուրարտական հնագույն բերդի պարիսպների վրա (միջնաբերդի հիմքերը դրված են կոպտատաշ և խոշոր քարասալերի վրա, որը հիմք է տվել նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանին այն համարելու ուրարտական կառույց), Շիրակի տեր հայ Կամսարական նախարարական տոհմի (3-8-րդ դդ.) կողմից՝ որպես Անիի

արևելյան մատույցները պաշտպանող ամրություն: Հայոց մայրաքաղաք Անին կառուցող Կամսարականները ոչ սովորական դիրք էին ընտրել այս ամրոցի կառուցման համար, քանզի չնայած Արարատյան դաշտավայրի արևմտյան հատվածի նկատմամբ իր իշխող դիրքի՝ այն, ի տարբերություն հայկական լեռնաշխարհի միջնադարյան մյուս բերդամրոցների, գտնվում է ոսկեգույն հարթավայրի վրա՝ զուրկ բնական որևէ անառիկությունից և տարիներ շարունակ ապավինել է իրեն շրջափակող սրբատաշ տուֆից կառուցված հզո՛ր քարե պարիսպներին:

Ըստ պեղումների արդյունքների՝ Դաշտադեմի բերդը կառուցվել է պատմության ընթացքում՝ փուլ առ փուլ: Ամենավաղ կառույցը՝ կառուցված Կամսարականների օրոք VII դ., քառանկյուն հիմքով, միադահլիճ, աշտարակներով ամրացված եռահարկ շինություն է՝ կառուցված սրբատաշ կարմրավուն տուֆ քարից: Դահլիճը թաղածածկ է եղել, պատերը՝ ներսից սվաղված կրաշաղախով, հատակը՝ սալապատ: Պատուհաններ չեն եղել. լուսավորությունն ապահովվել է կտուրի երդիկների միջոցով: Բագրատունիների օրոք՝ IX-X դդ, այն մասամբ վերակառուցվել է, սակայն դղյակ-ամրոցի է վերածվել Անիի Շադդադյան վերջին կառավարիչ Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուրիի օրոք (1064թ. սելջուկների կողմից Անի քաղաքը գրավելուց հետո Դաշտադեմի ամրոցը նույնպես անցել է նրանց տիրապետության տակ: Սելջուկներից հետագայում այն անցել է սուլթան իբն Մահմուդ իբն Շավուրին), ով 1174 թ. սեպտեմբերին հնագույն բերդը հիմնովին վերանորոգել է: Շինարարական այս աշխատանքների և թվագրության վերաբերյալ սուլթանը հարավ-արևմտյան աշտարակի վրա արաբերեն արձանագրություն է թողել, որը մինչ օրս պահպանվել է:

XIII դ ամրոցն ազատագրվել է Զաքարյան իշխանական տոհմի (11-14-րդ դդ.) կողմից: Մոնղոլական արշավանքների հետևանքով ամրոցը կործանվել է՝ ժամանակավորապես դադարելով պաշտպանական գործառույթ կատարելուց և վերածվել է սովորական բնակավայրի: 16-րդ դարից սկսած՝ կրկին կարևորվել է Դաշտադեմի ամրոցի դերը, քանզի 16-18-րդ դդ պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ այն արևմուտքից Երևանի մատույցները պաշտպանող միակ կարևորագույն ամրոցն է եղել: Այդ է պատճառը, որ Երևանի պարսիկ տիրակալները բերդն անընդհատ կառուցապատել, ամրացրել են: Հատկապես մեծ է եղել Երևանի սարդար Հուսեին-



Ղուլի խանի դերը, ով, նկատի ունենալով բնական պաշտպանվածությունից զուրկ լինելու հանգամանքը, 1812 թ. միջնաբերդն ու այն բոլորող պարսպապատը շրջապատել է ավելի հզոր՝ կոպտատաշ բազալտից կավե շաղախով շարված արտաքին բարձր պարիսպներով (մոտ 8 մ հաստությամբ և 25 մ բարձրությամբ)՝ բերդը վերածելով անառիկ ամրոցի, որը զբաղեցրել է շուրջ 20 հա տարածք: Արևմտյան մասում խանը կառուցել է նաև պալատ:

Փաստորեն, նշանավոր այս բերդը (7-19 դդ.), որն իր ռազմական նշանակությունն ամբողջապես կորցրել է 1827 թ-ից, երբ ռուսական զորքերը գրավել են այն, տիպիկ ֆեոդալական դղյակ է եղել՝ իր պաշտպանական բոլոր կառույցներով: Խանի պալատը (19-րդ դար), միջնաբերդը (7-10 դդ.), որից պահպանվել են միայն առաջին հարկի մեծ դահլիճը և վերևի հարկերի առանձին պատեր, միջնաբերդը շրջապատող առաջին (12-րդ դար) և երկրորդ պարսպապատերը (19-րդ դար) մեզ են հասել կիսավեր վիճակում, որոնք վերջին տարիներին կատարված վերականգնողական աշխատանքների արդյունքում մասամբ վերականգնվել են: Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիսային կիսաշրջանաձև բուրգից է, որի ճակատին պահպանվել են Բագրատունիների թագավորության զինանշան հովազակերպ պատկերները:

Ամրոցի տարածքում եղել են երկու եկեղեցի ( 7-րդ դարի, որը գտնվել է ամրոցի արտաքին բերդապարսպի հարավ-արևելյան աշտարակի հարավային կողմում (այժմ պահպանված են միայն հիմնապատերը: Քանդվել է XX դարի երկրորդ տասնամյակի ընթացքում՝ բնակելի տներ կառուցելու համար) և 10-րդ դարի (Սբ. Սարգիս), որը կառուցվել է պարսպապատի հյուսիսային պատին կից: Վերջինս միանավ թաղածածկ փոքր կառույց է՝ կառուցված սրբատաշ կարմիր տուֆից, որի մուտքերը արևմտյան և հարավային կողմերից են), որոնցից վերջինը կանգուն է: Ի դեպ, Դաշտադեմ գյուղից մոտ 2 կմ հարավ-արևմուտք գտնվում է Ս. Քրիստափորի վանքը, որը կազմված է VIIդ. փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցուց, նրանից հյուսիս՝ քառակուսի հատակագծով եռահարկ դամբարանատուն-զանգակատնից (13-14 դդ.), միաբանության բնակելի շենքերից (այժմ՝ ավերակ), անմշակ քարերից շինված պարսպից և 10-14 դդ. խաչքարերով հարուստ գերեզմանատնից: Եկեղեցին հիմնովին նորոգվել է 1980-ին:

Պեղումների արդյունքում պարզվել է, որ բերդն ունեցել է նաև ստորգետնյա ժայռափոր ջրավազան, ստորերկրյա գաղտնուղի, երկհարկ դասավորված տնտեսական շինություններ և զորապահեստներ, հնձանի հորեր, որոնք վկայում են Դաշտադեմի տարածքում զարգացած այգեգործության, առանձնապես՝ խաղողագործության մասին, իսկ հարակից տարածքը թաղված է եղել մրգատու այգիների՝ հատկապես ծիրանիների մեջ:

Փաստորեն, այս վեհաշուք բերդը, 7-րդ դարից ի վեր, հյուրնկալել, պաշտպանել և ապաստան է տվել հային: Այսօր մեր հերթն է այն բարեկարգելու, պահպանելու և պաշտպանելու՝ որպես վաղ միջնադարից եկող մշակութային անգին կոթող:

*Լյուսյա Առաքելյան*

## Ոսկեփորիկ. նմուշներ հին և միջնադարյան արձակից

### ԲԱԶԵՆ ԵՎ ԸՆՏԱՆԻ ՀԱՎԸ

— Ինչո՞ւ ես այդպես անշնորհակալ քո տիրոջ հանդեպ, ինչո՞ւ ես զգուշանում նրանից: Ի՛նձ նայիր, վայրենի լինելով հանդերձ՝ հենց որ տերս սուլում կամ ձեռքի շարժումով կանչում է, անմիջապես մոտենում եմ նրան: Իսկ դու թեև ազգուտակով ծնվել ու սնվել ես նրա տան մեջ, այնուամենայնիվ խուսափում ես նրանից:

— Խուսափում եմ, որովհետև շամփուրն եմ հիշում. մեզանից շատերին են խորովել, մինչդեռ բազեներից և ոչ մեկին ձեռք չեն տվել: Որքան որ ես հավ եմ տեսել շամփուրի վրա, ո՛վ թռչունների արքա, եթե դու գեթ մի բազե տեսնեիր, կարծում եմ, անդարձ կհեռանայիր մարդուց, և եթե հազար անգամ համոզեին ու բազում պարգևներ խոստանային, դարձյալ չէիր համաձայնի ենթարկվել նրա կանչին:

***Ամեն մի խոհեմ մարդ իմաստությամբ է վարվում, իսկ անմիտն իր հիմարությունը բացահայտում է:***
**Առակներ 13. 16**

### ԱՂՔԱՏՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ

Ոմն աղքատ մարդ մի կտոր միս էր խորովում անմարդաբնակ վայրում: Հանկարծ մի արծիվ սլացավ վերևից, հափշտակեց միսն ու անհետացավ: Աղքատը, երեսնիվայր գետնին ընկնելով, լաց եղավ՝ ասելով.

— Չվայելե՛ս:

Արծիվը միսը տարավ իր բույնը, դրեց ձագերի առջև ու հեռացավ: Մի կայծ, որ կպած էր մնացել մսին, այրեց արծվի բույնն ու ձագերին:

***Մի՛ գողացեք, կեղծությամբ մի վարվեք և միմյանց մի խաբեք:***
**Ղևտացիներին 19. 11**

## ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՏԻՎԸ

Մի թագավոր իր զորքով ճանապարհ էր գնում: Նա երկու սուրբ հայրի տեսավ՝ գարշելի հագուստով: Թագավորն իջավ նժույգից և խոնարհվելով՝ համբուրեց նրանց: Զորավարներն սկսեցին տրտնջալ, թե այս թագավորն իր մեծամեծերին պատիվ չի տալիս, իսկ չնչին մարդկանց մեծարում է:

Թագավորը, այդ իմանալով, հրամայեց չորս արկղ պատրաստել՝ երկուսն արտաքուստ գեղեցիկ ու քանդակազարդ, սակայն լի աղբով ու ավազով, իսկ մյուս երկուսը՝ հասարակ և անշուք, մինչդեռ լի ոսկով ու մարգարտով: Ապա կանչելով բամբասող իշխաններին ու ասաց.

— Գնահատե՛ք և ընտրե՛ք կնքված չորս արկղերից մեկը:

Նրանք ընտրեցին գեղեցիկները և բանալով՝ տեսան, որ լցված են աղբով ու ավազով և շատ զղջացին: Թագավորն ասաց.

— Այդպես եք նայում երեսին և պայծառ հագուստին այն մարդու, որ ներքուստ լի է աղտեղությամբ: Իսկ այն սուրբ հայրերը, որոնց հանդիպեցի, արտաքուստ էին աղտեղի, իսկ ներքուստ լի էին հոգու շնորհով:

***Այդպես էլ դուք, արդար եք երևում մարդկանց, մինչ ներսից կեղծավորությամբ ու անօրինությամբ լի եք:***

**Առակներ 23. 28**

*Կանգնեցրեք բոլոր գնացքներին շտապ,*
*Ինքնաթիռները վայրէջքի՛ բերեք,*
*Լարած շարժիչներն անջատեք, մարեք,*
*Գոռոզ նավերը շրջե՛ք դեպի ափ:*
*Շտապող մարդիկ, կանգնեցե՛ք, կանգնե՛ք,*
*Լսո՛ւմ եք, մեկը լալիս է վհատ,*
*Մոտեցե՛ք, ձեր ձեռքն իր ուսին դրեք,*
*Ձեր տաք աչքերով գգվեցե՛ք նրան:*
*Մի՛ թողեք հոգին թպրտա մենակ,*
*Ու մարդու կողքով մի՛ անցեք, մարդի՛կ,*
*Թեկուզ գրպանում՝ մեկնումին մոտիկ*
*Հողագունդ-ուսին տոմսակ ունենաք...*

**Ս.Կապուտիկյան**

# ԱՐՑՈՒՆՈՑ ՄԱՏՅԱՆ

*Հատված բաշկիր գրող, հրապարակախոս, հայագետ Կիմ Բակշիի «Ճակատագիր և քար» էսսեից*

Հակոբը գրիչ է, արդեն որերորդ մատյանն է ընդօրինակում: Բայց այս մեկն ուրիշ է: Միշտ երազել է մի մատյանի մեջ հավաքել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի տաղերը: Տաթևի համալսարանի մատենադարանում Հակոբը գտավ դրանք՝ կարված մի պատմական աշխատության հետ:

Այդ տողերից մեկը մխրճվել էր Հակոբի հիշողության մեջ. «Կյանքը նման է ճատրակի խաղի»: Նա միայն հիմա խորամուխ եղավ այդ բառերի իմաստության խորքը: Ո՞վ է շարժում խաղաքարերը: Ո՞վ կարող է ստույգ ասել, որ հենց վաղը բանական–խաղաքար գրիչ Հակոբը հավերժ դեն չի նետվի խաղատախտակից:

Հակոբը մտածում էր իր մասին, մատյանի մասին, որը երևի իր մահվան հետ մնար անավարտ:

Անցավ մի շաբաթ: Մոնղոլները մի քանի անգամ ելարաններ դրին ու փորձեցին բարձրանալ Տաթևի պատերի վրա: Բայց եկեղեցու զանգերը ղողանջում էին, և ուսուցիչը բոլորին օգնության էր կանչում:

Հակոբը հեռու էր մնում կռիվներից: Ուսուցիչը նրան պատվիրել էր փակվել խցում և շարունակել աշխատանքը: Եվ Հակոբը գրում ու գրում էր՝ ականջներում կռվի շռինդը: Իսկ մտքում շարունակ պտտվում էր իր և ուսուցչի զրույցը:

Նա բոլորին պատվիրել էր սուր վերցնել: Բայց վերջում պահել էր Հակոբին և հորդորել, որ կռվից հեռու մնա և շարունակի ընդօրինակել:

— Բայց Հա՛յր սուրբ, մի՞թե հիմա գրչագրի ժամանակ է: Ի՞նչ իմաստ ունի ընդօրինակելը, երբ չգիտենք՝ ուր պահել մատյանները:

— Իրավացի չես, Հակո՛բ,— մեղմաձայն ասել էր Հովհաննես Որոտնեցին,— ինքդ մտածիր՝ ի՞նչ կլինի, եթե քո իսկ հայտնաբերած այդ հին, այրված, հողի խոնավությունը ճաշակած եզակի ձեռագիրը չվերածնվի քո աշխատանքով:

Ամբողջ հաջորդ օրվա ընթացքում, շնչելով թշնամու խարույկների խեղդող ծուխը, լսելով նրանց թմբուկների թնդյունը, Հակոբը ջանադրաբար ընդօրինակում էր մատյանը:

— Ռաբունապետը կարգադրեց վերցնել մատյանը և վազել տաճար: Անհավատները հետևի կողմից ճեղքեցին,— ներս մտնելով՝ ասաց մի սարկավագ:

Հակոբն արագորեն ձեռքն առավ խուրջինը: «Որտե՞ղ է թանաքը, ահա՛ սրվակները, թանաքամանը, ներկերը, մաքուր մագաղաթի կապոցը և նաև նոր ընդօրինակված մատյանը»:

Գրիչը տենդորեն ուսին նետեց կապոցը ու վազեց դեպի ավանդատուն: Այնտեղ էին նաև մյուս վանականները՝ ուսերին մատյաններով լի խուրջիններով: Հովհաննես Որոտնեցին իր գավազանով մատնացույց էր անում դեպի ներքև՝ դեպի խոնավ ու խավար գետնախորշը:

Անցավ երկու տարի: Վանականների խումբը գիշերը քայլում էր, իսկ ցերեկը

թաքնվում որևէ ապահով վայրում: Այսօր նրանք ապաստանել էին աչքից հեռու մի բացատում: Իր ճամփորդական գրակալի առջև նստած էր գրիչ Հակոբը: Նա նկատելի նիհարել էր, բայց դեռ ծանրամարմին էր: Ամեն կողմից նրան շրջապատել էին մագաղաթի թերթերը, ներկերով ու թանաքով լի սրվակները, ապագա մատյանի կարված էջերը: Մատյանն ավարտված էր: Հիմա Հակոբը գրում էր հիշատակարանը. պատմում էր, թե ինչպես փախան թշնամուց, ինչպես երկու տարի անընդմեջ տեղից տեղ գնացին, և ինքը հանգստի պահերին անգամ գրում էր ու գրում:



*Վարդգես Սուրենյանց, «Ոտնահարված Սրբություն»*

Արևն անցավ սարի հետևը, երկինքն անմիջապես կանաչեց, մեկը մյուսի հետևից կապտեցին լեռների եզրագծերը: Վանականները կապկպեցին ունեցած–չունեցածը և պատրաստվեցին գիշերով ճամփա ելնել:

Հակոբի սիրտը կուչ եկավ: Նորից գիշեր, նորից ճանապարհ, նորից ոտքերի տակ ընկնող կարծր քարեր, իսկ ոտնամանները հալից ընկել են: Նորից խուրջինն ուսերը կքերի, քանի որ շատ ծանր է: Աչքերը լավ չեն տեսնում: Այս ամենը նորից ու նորից, տե՛ր Աստված:

Քայլեցին ողջ գիշեր և ողջ առավոտ: Կեսօրին մոտ նրանք մեծ ճանապարհ դուրս եկան, որ մտնեն անտառապատ խոր կիրճը, սակայն չհասցրին: Դանդաղորեն դեպի նրանց էր մոտենում մոնղոլական հեծյալ ջոկատը: Հեծյալները հետաքրքրությամբ դիտում էին ճամփեզրին խռնված ցնցոտիավոր մարդկանց:

Ջոկատի վերջապահը մի երիտասարդ զինվոր էր: Այսօր նրա տրամադրությունը շատ բարձր էր. ձին տակին խայտում էր: Ձեռքերը հանգիստ չէին մնում. նա վեր-վեր էր գցում վահանը՝ մերթընդմերթ ձեռքը դեպի կեռ թուրը մեկնելով: Հանգիստ, կատակի տալով՝ նա թռցրեց հաստլիկ վանականի գլուխը և շարունակեց ճամփան:

Գրիչ Հակոբն ընկավ խուրջինի վրա, և նրա արյունը ողողեց մատյանները:

Կարդալով 4 Ավետարանները՝ հարց է առաջանում՝ ո՞վ է և ինչպիսի՞ն է Հիսուսը: Այս հարցերը քննարկվել են նաև Հիսուսի կենդանության օրոք: Ավետարանիչները, այս հարցերին պատասխանելով,

*ա. Պատմում են Հիսուսի աշակերտների և այլ մարդկանց մտածածը:*

*բ. Պատմում են, թե Հիսուսն ինչ է ասել ինքն իր մասին:*

*գ. Տալիս են իրենց վկայությունները Հիսուսի մասին:*

*դ. Հենվում են Հին Կտակարանի և հին հրեական տեքստերի վկայությունների վրա:*

***Օգտվելով Հովհաննեսի Ավետարանից՝ լրացրու անվանումները, որ Հիսուսն ասել է ինքն իր մասին.***

| | | |
|---|---|---|
| 1. | «Ես եմ կենաց հացը» | Հովհ. 6. 35 |
| 2. | «Ես եմ _____» | Հովհ. 8. 12 |
| 3. | «Ես եմ _____» | Հովհ. 8. 58 |
| 4. | «Ես եմ _____» | Հովհ. 10. 11 |
| 5. | «Ես եմ _____» | Հովհ. 11. 25 |
| 6. | «Ես եմ _____» | Հովհ. 14. 6 |
| 7. | «Ես եմ _____» | Հովհ. 15. 1 |

Երբեմն դպրոցում դասի ժամանակ լինում է չէ՞, որ բացում ես վանդակավոր տետրիդ վերջին էջը և ընկերոջդ առաջարկում խաղալ բոլորին լավ հայտնի «իքսիկ-նոլիկ» խաղը: Այն համարվում է տրամաբանական ամենահին խաղերից մեկը, որը խաղացել են ոչ թե տառերով, այլ սև և սպիտակ քարերով: Իսկ գիտե՞ս, թե որտեղից է առաջացել և աշխարհով մեկ տարածվել այս խաղը: Ենթադրվում է՝ Չինաստանում մաթեմատիկոսների կողմից: Այնուհետև խաղը տարածվել է ամբողջ աշխարհում և տարբեր երկրներում ստացել տարբեր անվանումներ: Այսպես, օրինակ՝ մենք ասում ենք «Իքսիկ-նոլիկ», ԱՄՆ-ում անվանում են «Tic-tac-toe», Ռուսաստանում՝ «Смекалка» և այլն:

| | | |
|---|---|---|
| X | O | X |
| | X | O |
| O | | O |

## ԿԱՆՈՆՆԵՐ

*XO խաղը 9 վանդակից բաղկացած խաղ է, որտեղ մրցակիցները հաջորդաբար պետք է տեղադրեն X և O նիշերը:*

*Խաղը համարվում է ավարտված, երբ բոլոր վանդակները լրացված են կամ խաղացողներից մեկը հաղթել է:*

*Եթե որևէ մասնակից հավաքել է ուղղահայաց, հորիզոնական կամ անկյունագծով երեք նիշ, ապա նա համարվում է հաղթող:*




1. *5 փայտե ձողիկ տեղաշարժել այնպես այնպես, որ սպացվի 2 քառակուսի:*
2. *2 փայտե ձողիկ տեղաշարժել այնպես, որ տնակը «նայի» հակառակ ուղղությամբ:*

# ԱՆՄԱՀՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Երաժշտ.՝ Ար. Կարապետյան
Խոսք՝ Ա. Հունանյան